



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6653

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵԿ

87

ԸՆԿ. ԲՈՒԽԱՐԻՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ  
ՌՈՒՍ. Կ. Կ. XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՅԱԹՅԱՆ «ՄԱՐՏԱԿՈՉ»  
ԹԻՖԼԻՍ № 23 1924

3K172

P-95

11 MAR 2013

6653

ՀԿԴ  
Բ-95

5 SEP 2005

14 NOV 2009

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈ-  
ՄԻՏԵՅԻ ՌՈՒՍ. ԿՈՄ. ԿՈՒՍ. ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹՅԱՆ ՀԱՅ-  
ՎԵՑՎՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ըսկերներ, իմ զեկուցումը, վորը միաժամանակ Կոմինտերնի Գործադիր Կոմիտեյի մեր կուսակցության պատգամավորության զեկուցումն ե, կուսեմ այն փոփոխությունների վերլուծումից, վորոնք առաջացել են միջազգային համաշխարհային տնտեսականության (եկոնոմիկա) շրջանում: Յես կանգ չեմ առնելու այնպիսի հարցերի վրա, ինչպես են պատերազմի հետևանքները և հետպատերազմյան կոնյուկտուրայի\*): Ես կապված մի ամբողջ շարք հարցերը (այդ արված ե անցյալ տարվա հաշվետվության ժամանակ): Յես այստեղ համարյա բոլոր հարցերը քննության եմ առնելու այն փոփոխությունների տեսակետից, վորոնք տեղի յեն ունեցել ընթացիկ հաշվետարում: և աշխատելու յեմ հասարակական կյանքի տարրեր շրջաններում—սկսած տնտեսական շրջանից—կատարված այս փոփոխությունները հյուսել մի ամբողջության մեջ՝ վորոշչափով լրիվ պատկերը տալու այն բոլորի, ինչ վոր տեղի յե ունե-

\*): Կոնյուկտուրա նշանակում ե—այն արտաքին պայմանների գումարը, վորոնք ազգում են ապրանքների արժեքի, ձեռնարկների յեկամաժի վրա: Այդ պայմաններն են յերկրի բնակչության խտությունը, նրա քաղաքական և տնտեսական կազմը, պետության առևտրա-արդյունաբերական քաղաքականությունը, տեխնիկայի և փոխադրական (տրանսպորտ) գործի հառաջադիմությունը, բերքի տատանումը:

Ժան. Թարգմանչի



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԳՁԱՅՆ  
ԴՐԱՄ

375-95-

շել ընթացիկ տարում, և այն յեզրակացությունների՝ վորը պեար և մենք հանեսք՝ ի մի գումարելով ընթացիկ տարվա փորձերը:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

Այսպես, ընկերներ, թույլ ավել նախ և առաջ կանգ առնել այն փոփոխություններին վերաբերվող հարցերի վրա, վորոնք տեղի դեռ ունեցել միջազգային տնտեսականության շրջանում: Կարծում եմ, վոր կարելի յե այստեղ թվել լերեք գլխավոր փոփոխություն, — առաջին՝ բարձր տնտեսական կոնյուկտուրայի ավարտը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Յերկրորդ՝ թեև համեմատարար աննշան, բայց ցայտուննկատելի՝ տնտեսական դրության բարելավումն: Կենտրոնական Յեվրոպայում և ընդհանրապես Յեվրոպայում: Վերջապես յերրորդ յերեսութը, վորը մենք պետք ենկատենք միջազգային տնտեսականության վերլուծման գեպքում, — դա հողային (ագրար) ճգնաժամն են զրա հետ կապված «Մըկրատ» միջազգային մասշտաբով: Ինձ թվում են, վոր համաշխարհային «Մէկրատի» փաստը վոչ մի կասկածի չի յենթարկվում, թեև մի քանի հետազոտող՝ տնտեսագետներ առարկում են դրա գեմ:

Ինչ վերաբերում են կապիտալիստական յերկրների տնտեսությանը, ընդհանուր առմամբ իրերի ներկա գրությունը կարելի յերնույթագրել այսպես—կապիտալիստական արտադրությունը մոտենում են նախապատերազմական վիճակին: Բայց այս ընազավառութ խիստ տարրերություն կա ինչպես առանձին յերկրների, այնպես եւ արտադրության առանձին ձյուղերի միջև: Առանձին յերկրներից՝ արտադրամքի (պլոտուկցիա) աճումն ամենից ավելի աչքի յե ընկնում Միացյալ Նահանգներում:

Արտադրության տարրեր ճյուղերի նկատմամբ պետք են ասել, վոր այդ աճումն ամենից ավելի տեղի ունի դյուզանտեսական արտադրության մեջ, ուր ամենակարևոր և ամենախոշոր ճյուղերում համապատասխան թվանշաններն անցել են մինչպատերազման թվանշաններից: Մյուս կողմից բնորոշ են, վոր արտադրության այն ճյուղերում, վորոնք ամենամեծ տեսակարար կը շնո՞ւն կապիտալիստական, այլև ամեն մի աճող արտադրության մեջ, այսինքն խոշոր արդյունագործության շրջանում, դեռևս չի հաջողվել հասնել մինչպատերազման թվանշաններին:

Այսպես որինակ յեթե վերցնենք համբարդյունարե բությունը և համեմատենք 1909—13 թվերի միջին տարեկան թվանշանները 1923 թվի թվանշանների հետ, ապա յերկու ամենախոշոր արտադրական ճյուղերում—չուզունի և պրոպատի արտադրության մեջ, կունենանք հետեւյալ տվյալները.—չուզունի մինչպատերազման թվանշանը 78 միլիոն տոնն, այժմյանը՝ 65 միլիոն տոնն. պոդպատը 75 միլիոն տոնն 1909—13 թվերին, 73 միլիոն տոնն ընթացիկ տարում: Ինչ վերաբերում է փոփոխական միջոցներին, մասնավանդ ջրային, վորոնց արտադրության զարգացումը ցուցանիջն և համաշխարհային տուերի զրության, վորն իր հերթին բնորոշում և համաշխարհային տնտեսության զարգացումն իր ամբողջությամբ, համեմատական թվերը ցույց են տալիս հետեւյալը. նավաշինությունը 3,300 հազար տոնն տարեկան՝ 1909—13 թվերի ժամանակաշրջանում և 1,643 հազար տոնն՝ ընթացիկ 1923 թվին: Արդյունաբերության մի ճյուղ ել կա, վորը ցույց է տալիս միացյալ տնտեսական մեխանիզմի շարժումը—դա կառուցողական գործունեությունն ե: Նա սովորաբար ամենալավ ծանրաշափն և (բարօմետր) զնահատելու այս կամ այն ամուր հիմնավորված տնտեսական կոնյուկտուրան: Մենք այդ շատ լավ գիտենք սեփական փորձով: Հենց վոր մեզանում սկսվեց կենդանությունը, իսկույն նա իր արտահայտությունը գտավ կառուցման, բաղաբների վերանորոգման և այլ նման գործերում: Յեթե այդ տեսակետից մոտենանք իմնդրին, կարող ենք ասել, վոր համարյա ամբողջ Յեվրոպայում կառուցողական գործունեությունը նույն մակարդակի վրա յե գտնվում, ինչ վոր մինչև պատերազմը, նույնիսկ ընդհակառակն: Ամերիկայում 1923 և 1924 թվերին, մասնավանդ մինչև ապրիլ ամբուր, վորը տնտեսական կոնյուկտուրայի թերման մոմենտն և համաշխանում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մենք ուզզակի բացարկ կառուցողական գործունեության ենք տեսնում: Յերկաթուղային կառուցումը, դրկերի (նավերը վերանորոգելու տեղը նավահանգստում), պահանաների, տների և այլն և այլն կառուցումը չափազանց, համարյա շլացուցիչ կերպով, զարգացած եր Ամերիկայում 1923 թվին, բարձր տնտեսական կոնյուկտուրայի հետ միասին:

Համաշխարհային արդյունաբերության ընդհանուր գրությունը բնորոշելու համար, յես կը բերեմ համաշխարհային գործադրկությանը վերաբերող մի քանի ցուցանիշ թվեր: Այդ թվերը հին և նոր աշխարհների մի շարք խոշորագույն յերկրների

նկատմամբ, ինչպես են Հյուսիսային Ամերիկայի Միացյալ նահանգները, Անգլիան, Գերմանիան, Չեխո-Սլովակիան և Լիհաստանը, ցույց են տալիս, վոր գործազրուրիների ներկա քանակը արտահայտող թվանշանները զուգադիպում են այն թվանշաններին, վոր մենք ունեինք այդ յերկրներում 1921 թվի հունվարի 1-ին, 1921 թվին կար 4,958 հազար գործազրուրկ, իսկ 1924 թվին —5,261 հազար: Ճիշտ ե, սա կատարյալ և լրիվ պատկերը չե, քանի վոր այստեղից դուքս ե մեռմ այն յելքովական յերկրը, ուր գործազրկությունը կրճատվել ե մինչեւ մինչմում, այսինքն Ֆրանսիան, բայց ընդհանուր առմամբ իրերի գրությունը ցույց է տալիս ներքին կապիտալիստական հարաբերությունների վորոշ կայունություն (ստարիլիզացիա), յերբ այս կամ այն տատանումներն ու ճոճումները մի շրջանում փոխարինվում են այլ տատանումներով ու ճոճումներով աշխարհագրական ուրիշ կետերում: Այս ընդհանուր դրությունը:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՆՅՈՒԿՏՈՒՐԱՆ ՄԻԱՅՅԱ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ինչ վերաբերում ե տեղի ունեցած առաջին փոփոխությանը, վորը պետք ե հաշվի առնենք մենք, այսինքն Ամերիկայի Միացյալ նահանգների բարձր կոնյուկտուրայի ավարտին, այդ փոփոխությունը բնորոշող վիճակազրական տվյալների հաշվեդումարը դեռ չունենք: Սակայն մի ամբողջ շարք վիճակազրական առանձին տեղեկություններ ու փաստեր առում են մեզ, վոր բարձր կոնյուկտուրան Միացյալ-Նահանգներում սկսում ե ցած թեքվել սկսած 1923 թվի ապրիլից: Այդ հանգամանքն ամենից լավ յերեսում ե պողպատի արեստի արտադրության մեջ, ուր արդեն ապրիլին այդ անկումը համառում ե 6—7 տոկոսի՝ մարտ ամսի հանգեղ, և նույն պողպատի արտադրության մեջ «առւտսայդեր»-ներում (այդպես են կոչվում այն ձեռնարկությունները, վորոնք չեն մտնում արեստների մեջ), ուր արտադրության անկման համապատասխան տոկոսը համառում ե 8—10%-ի: Արտադրության անկմանը համապատասխան տեղի յե ունենում գործազրկության հավելումն, թեև փոքր չափով և առաջին հերթին անվորակ բանվրների հաշվին:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՅԱՆ բարելավումն ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՑԵՎ- ՐՈՊԱՅՈՒՄ

Անցնելով յերկրորդ փոփոխության, այսինքն Յելբոպայում տեղի ունեցած վորոշ բարելավման հարցի բացատրությանը, յես դեռ ուշադրություն կը հավիրեմ ամենից առաջ Անգլիայի վրա: Յեթե վերցնենք խոշոր արտյունագործությունը Անգլիայում և հետեւնք հալոցքի (դոմեն) վառարաններին, կստանանք հետեւյալ թվանշանները.—մինչպատերազմյան շրջան՝ 1913 թ.—337 վառարան, 1922 թ. (ամենամեծ անկման և դրան կից խոշորագույն գործադրուների տարին)՝ 132, իսկ 1923 թ.—200: Հավելումը բուրովին պարզ ե: Վերցնենք մետաղ-հանքերի արտադրությունը նույն թվերին. 1913 թ.—7,439 հազար տոնն: Հավելումը միանգամայն պարզ ե 1922 թվի ճնշաժամից հետո: Հետո, պողպատի արտադրությունը.—1913 թվին—7,764 հազար տոնն. 1922 թ.—ամենամեծ անկման ժամանակ—5,881 հազար տոնն, իսկ 1923 թ.՝ 8,483 հազար տոնն:

Յեթե վերցնենք գործազրկությունը մոտ անցյալում, կստանանք հետեւյալ թվանշանները հազարներով. 1922 թ.—1,926, այսինքն՝ մոտ 2 միլիոն հոգի. 1923 թ. պակասում և համառ և 1,493-ի, իսկ 1924 թ. հունվարի 1-ին ընկնում ե 1,371-ի (մի ձայն տեղից—«միլիոն»):

Բոլիսարին—Այն, յես հազարներով եմ խոսում, իսկ հազար անդամ հազարը կամի միլիոն—դա թվարանական որենք ե, այս տեղ ֆրակցիոն վեճ չի կարող լինել (ծիծաղ):

Պակաս արտահայտիչ չե նաև վերելքը Գերմանիայում: Ածուխի արտադրությունը 1924 թ. մարտին արդեն համառում եր մինչպատերազմյանի 90—95 տոկոսին: Երկաթի արդյունագործությունը —70—80 տոկոսին: Սակայն շատ հետաքրքիր և արտահայտիչ ե նաև գործազրկության վերաբերյալ թվանշանները. Յեթե վերցնենք գործազրկությունը 1924 թ. և հետեւնք նրան ըստ ամիսների, կտեսնենք, վոր գործազրկությունը բանակը կանոնավոր և շատ խիստ կերպով նվազել ե,—1924 թվի հունվարի 1-ին կար 1,532 հազար գործազրուրկ, փետրվարի 1-ին—1,440 հազար, մարտի 1-ին—1,672 հազար, ապրիլի 1-ին—702 հազար և ապրիլի 15-ին—480 հազար:

Յեթե վերցնենք վոչ բոլորովին գործազրուրկներին, այսինքն այն բանվորներին, վորոնք լրիվ բանվորական որ չեն աշխատում,

1924թվի առաջին յեռտմայակի համար կը տեսնեմք հետեւալ նվազումը.—Հունվարի 1-ին—848 հազար, փետրվարի 1-ին 362 հազար և մարտի 1-ին—151 հազար 4 հարյուր, այսինքն անկառած է, վոր գործադրկությունը Գերմանիայում ընկնում է: Յեթե վեցնենք գործադրկության շարժման թվանշանները մինչև հոկտեմբեր և նոյեմբերից հետո, դուք կը տեսնեք, վոր ճնշաժամի և պրոլետարիատի պարտության բաղաքականությունը Գերմանիայում ըստ ժամանակի զուգադիպում և տնտեսական վորոշ նոր զարգացման: Յեթ այդ հանգամանքը միայն Գերմանիայի համար չէ, վոր նշանակություն ունի.—գոնե այդպիս և ինձ թվում: Ինչ վերաբերում ե գործազրկությանը Ֆրանսիայում, պետք ե ասել, վոր այստեղ նա վաղուց ե արդեն վերջացել: Ֆրանսիական աշխատանքի մինիստրության տվյալների համաձայն տեսնում ենք, վոր Ֆրանսիան նույն իսկ 112 հազար հոգի իտալական բանվորներ և ներս ընդունել:

Անցնելով մյուս բնադրավայրն—վալյուտային և Փինանսական հարցերին—պետք ե նկատենք, վոր հաշվետարին չափազանց ճնշաժամային տարի յի ներկայանում: Մենք տեսանք մի քանի վալյուտաների վիճումն Ավստրիայում, Լեհաստանում և Գերմանիայում: տեսանք նաև այդ վիճումներին հաջորդող վալյուտային և Փինանսական գրության կանոնավորումն նույն այդ բնագավառում: Ամենավերջին ժամանակները—մարտին և ավելի ուշ—տեղի ունեցած վորոշ բարելավումն վալյուտայի հարաբերությունների շրջանում:

Ինքնին հասկանալի յե, վոր այն թվանշանները, վորոնց մասին յես խոսում եմ, դեռ բոլորովին բավական չեն, վերելքը նշանավոր համարելու համար, բայց անկման ընդհանուր շերջանում մենք տեսնում ենք անկառած կոնյուկառուրայի վորոշ թեքումն գեպի վեր, դեպի բարձրը:

### Մկրատը միջազգային մասշտաբով

Վերջապես յերրորդ փոփոխությունը՝ հողային ճնշաժամն և արդեն մեզ ծանոթ «Մկրատի պրոբլեմ»: Այս հարցը դեռ բավարար չափով չի մշտկված իր ամբողջ լրությամբ և լայնությամբ, ուստի յես չեյի համարձակվի սպառող զատողություն տալ այստեղ հողային ճնշաժամի և «Մկրատի» պատճառների վերաբերմամբ:

Սակայն ինձ թվում ե, վոր մեզ համար այնուամենայնիվ անհետաքբեր չե ծանոթանալ այդ բնագավառի մի քանի հարցերին, վորովհետև մենք այստեղ հանդիպում ենք մի քանի տընտեսական յերեսությունների, վորոնք, չնայած մեր տնտեսության և սկզբունքորեն կապիտալիստականից տարրեր՝ մեր տնտեսական որդանների (մենաշնորհ, տրեստ և սինդիկատ) սոցիալիստական կառուցվածքին, անպայման ազգակցական կամ մերձավոր ընություննեն:

Ամենից առաջ, ինձ թվում ե, չի կարելի բացասել համաշխարհային «Մկրատի» փաստը: Գերմանական «Վիրտշաֆտլիխ» Ստատիստիկականի վերջին համարներից մեկում (№ 8) այդ հարցի վերաբերյալ մի շատ հետաքրքիր վիճակազրական տեղեկություն կա:

Յորենի, ածուխի և յերկաթի գների փոխարարերությունը տարրեր յերկրներում:

Մի տոնն ցորենով կարելի յե գնել (ընդունելով 1913 թվի հավասարությունը 100)

### I. Գ Ե Բ Մ Ա Ն Ի Ա

Ժամանակ	Ածուխ	Յերկաթ
1913 թ.	100	100
1922 »	123	107
1923 »	59	60

### II. Ա Ն Գ Լ Ի Ա

1913 »	100	100
1922 »	79	98
1923 »	64	72

### III. Ֆ Բ Ա Ն Ս Ի Ա

1914 (հուլիս)	100	100
1922 »	74	97
1923 »	80	65

V. Բ Ե Լ Գ Ի Ա					
1914	»	• • •	—	• • •	100
1922	»	• • •	—	• • •	96
1923	»	• • •	—	• • •	68

## V. Շ Վ Ե Ղ Ի Ա

1913	»	• • •	100	• • •	100
1922	»	• • •	82	• • •	83
1923	»	• • •	77	• • •	86

## VI. ԶԵԽՈ-ՍԼՈՎԱԿԻԱ

1914 (Հուլիս)	• • •	100	• • •	100	
1922	»	• • •	45	• • •	69
1923	»	• • •	49	• • •	88

## VII. Լ Ե Հ Ա Ս Ա Ն

1914 (Հունվար)	• • •	100	• • •	100	
1922	»	• • •	172	• • •	87
1923	»	• • •	105	• • •	72

## VIII. ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԴՆԵՐ

1913	»	• • •	100	• • •	100
1922	»	• • •	61	• • •	81
1923	»	• • •	80	• • •	73

Ինչպես ել չմեկնաբանենք այս թվանշանները, ինչպես ել չբացատրենք ընդհանուր որինաչափության մասնավոր խախտումները, մեր առջև կը մնա անհերքելի փաստը—մկրատի բերանների բացվածքը համաշխարհային մասշտաբով։ Հետաքրքիր ե, վոր վերջին ամիսը բուրժուական ամբողջ տնտեսական գրականությունը հողվածներ են նվիրում հողային ճգնաժամին։ Յեզ վոչ միայն բուրժուական այլ և սոցիալ պատրիոտների գրականությունը։ «Դի Գեղեցափա» պարբերականի վերջի գրքում զետեղված են րա հրատարակիչ Ռուդոլֆ Գիլֆերդինսգի հողվածը՝ հողային ճգնաժամի վերաբերյալ։ Ինչպես վոր մենք պետք են հետաքրքրվեյինք,

«Մկրատի» հետ կապված զյուղացիական շուկայի պրոբլեմով, ձիշտ այդպես ել խոշոր կապիտալիստական յերկրներն են ստիպված քննության դնելու այդ տնտեսական հարցը, քանի վոր նա ամեն տեղ ել շատ սուր կերպարանք ե ստանում։ Հետաքրքիրն այն է, վոր թանձրացյալ (կոնկրետ) արտահայտությունների կամ համեմատության մեթոդների շրջանում անգամ, յեթե կուգեք, բուրժուական տնտեսագետներն արդեն իսկ դիմում են այն միջոցներին, վորոնց դիմում եյինք մենք, յերբ քննում եյինք «Մըկրատի» պլրոբլեմը մեղնում։ Այսպես որինակ «Վիրտշաֆտ ունդ Ստաուստիկ» պարբերականում տվյալներ են մեջ բերած զյուղատնտեսության և արդյունագործության նյութերի գների փոխարաբերության մասին։ բոլորովին թանձրացյալ և մեզ ծանոթ կապակցությամբ կամ համեմատությամբ։ Այսպես, այստեղից տեղեկանում ենք, վոր գութանի գինը 1913 թվին համապատասխան եր 6,6 ցենտներ հաճարի գնին, իսկ 1923 թ. հունվարին՝ 11 ցենտներ հաճարի 1923 թ. հոկտեմբերին գութանի գինը համապատասխանում եր 4 անգամ ավելի կարտոֆելի գնի, քան 1913 թվին։ Այդ Գերմանիայում, Յես առանձին եմ վերցնում Գերմանիան, վորովհետև նա մեր ուշագրության կենտրոնն ե կազմում։ Յեթե հաճարի հարաբերությունը առ մեքենան վերցնենք վորպես 100 առ 100 1913 թվին, ապա 1924 թ. փետրվարին այդ փոխարաբերությունը կը լինի 61 առ 100։ Յեթե վերցնենք հաճարի համապատասխան համեմատությունը պարարտացման նկատմամբ—իսկ պարարտացումը նշանավոր գեր ե կատարում գյուղացիական շուկայում—կը ստանանք 84 առ 100 համապատասխան փոխարաբերությունը։

Այսպես, ինձ թվում ե, վոր «Մկրատի» գոյության փաստը համաշխարհային մասշտաբով վոչ մի կասկածի չի յենթարկվում։ Հետաքրքիրն այն է, վոր այդ պլրոբլեմը վերաբերում ե նաև միացյալ նահանգներին և Անդլիային։ Յեզ այդ հողագործ լայն մասների հեղափոխականացման հիմքն ե (բազիս)։ Հողային ճգնաժամի և «Մկրատի» պլրոբլեմը ունի յուր տակտիկական—քաղաքական համարժեքը (եկվիվալենտ)։ Այդ հողի վրա առաջանում ե լայն մասսաների հեղափոխականացումը։ Գյուղատնտեսական մանր բուրժուազիան հեռանում ե բուրժուազիայից։ Այս յերեվոյթը սոցիալ-քաղաքական տեսակետից չի կարող լրիվ կերպով չգնահատվել։

Ահա թե ինչ ե դրում որինակ պլրոֆեսոր Զուալդը, ծերունի

անտեսագիտ Զուզրովի տղան «Կրեստյանսկայա Բոսիայի» չորրորդ ժողովածուի մեջ Անգլիայի, այսինքն մի այնպիսի յերկրի վերաբերմամբ, վորը զյուղացիության տեսակարար կշռի տեսակետից առանձին նշանակություն չունի: Նա առում ե, «Բնական ե, վոր նման պայմաններում հերթի և գրվում վարկի հարցը: Երած դժվարությունների համար մեղքը գցվում ե այն բանկերի վրա, վորոնք իրը թե բավարար ոգնություն չեն ցույց տալիս հողագործներին: Առանձնապես հարձակման են յենթարկվում մեծ ակցիոներական բանկերը, զյուղական տնտեսատերերը, հենց մի գլուխ նրանց են միջադրում այն բանու՛: վոր ճգնաժամն այդպիսի սուր ծեփեր ե ընդունում»:

Յես դիտմամբ տվյալ գեղըրում գիմեցի այդպիսի մեկի վկայության, վորն ամեններն շահագրգոված չե խոշորացնելու հողային ճգնաժամի բաղաքական հետեանքները, և վերցրեցի հատկապես այնպիսի յերկրը, ուր այդ հարցը եական կամ առաջնակարգ նշանակություն չունի: Նույն իսկ այդպիսի յերկրում, ինչպես տեսնում եք, հողային ճգնաժամը և նրա հետ կապված «մկրատի» պրոբլեմը խորը վրդովմունք են առաջանում զյուղացիների մեջ, վորը տվյալ դեպքում, ինչպես յերեւում և իմ մեջ բերած հատվածից, ուղղվում ե ակցիոներական բանկերի, այսինքն ֆինանսական կապիտալի տիրապետող ձեր դեմ: Այսպիսով այստեղ նկատում ենք, վոր մանր զյուղական արտադրողը հեռանում և բռուժադիայից: Ամերիկայում վերջին ժամանակներու ճգնաժամը շատ լայն տարածություն բռնեց: Հաշվում են, վոր բոլոր ագրարակատերերի (Փերմեր) 38 տոկոսը ներկայումս դարձել են վարձակալներ (արենդատոր): Դեռ 1922 թվին մոտ 2 միլիոն ագրարակատեր թողեցին իրենց ագրարակները, թեև հետո դրանցից մոտ 800 հազար հոգին ելի վերադարձն: Դժբախտարար ձեռքիս չունեմ վերջին շրջանի թվանշանները: 1923 թվի համար սովորաբար 3 միլիոն են հաշվում ագրարակները լքողների բանակը, բայց այդ թվանշանն ինձ չհաջողվեց ստուգի: 1923 թվի վերջին ագրարակատերերի պարաքը կազմում եր 15 միլիոն դրամ—բավական խոշոր գումար: Դժբախտարար այս գումարի վնահատությունը տարբեր է լինելու նայած մի շաբք զանազան մոմենտների, և ինք ըստինքյան ել արտահայտիչ չե: Կասկած չկա, վոր հողային ճգնաժամը, չնայած կապիտալիստական տնտեսականության վորոշ կայունության, վորի մասին խոսեցի արդեն, սեպի նման խրվում ե անցքերի ընթացքի մեջ, և միջազգային կապիտալիս-

տական անտեսությանը կարող ե վորոշ չափով անսպասելի հարցած հասցնել: Դրա համար ել, այս յերկությը պետք ե ճշտորեն հաշվի առնենք, վորչափով մենք այդ յերկությը կապում ենք և պետք ե կապենք մի ամբողջ շարք ուրիշ յերկությների հետ, վորոնք արդեն անմիջականորեն աղղում են սոցիալ-քաղաքական գրության վրա և վորոշում մեր տակտիկական խնդիրներն ու հրահանգները (գիրեկտիվ):

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ՄԻՋԱՋԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

Սույն հաշվետարվան տնտեսական հարաբերությունների վերլուծումից անցնում եմ այն փոփոխությունների վերլուծման, վորոնք տեղի յեն ունեցել միջազգային քաղաքականության ըրբ: Հանում և խոշոր խմբավորումներ առաջացրել բուրժուական կառավարական շրջաններում: Մենք տեսանք, վոր կապիտալիստական տնտեսության մեջ արդեն իսկ գոյություն ունի վորոշ «սոցացող» ճգնաժամ: Մյուս կողմից մենք տեսանք, վոր այն համեմատական առողջացումը, վոր տեղի ունի առաջին հերթին յեվուազական յերկրներում, կատարել և կատարվում ե բուրժուազիայի միջին խավի և զյուղացիության մի մասի բռնագրավման (եքսպրոպրիացիա) գնով, այլև բանվոր դասակարգի վրա գործադրած շատ մեծ ճնշումով:

**Ներկա ճգնաժամը—կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամն ե**

Յեթե հարց տանք մեզ, թե այդ «կապիտալիստական որդանիքմի սոցացող ճգնաժամի» պատկերի մեջ ինչ փոփոխություն և առաջ յեկել ապա, թվում և ինձ, ամենացայտուն փաստն այդ շրջանում այն ե, վոր բնագավական բնույթ կրող միասները (տենդենց) սողացել, մտել են հալթոող-յերկրները: Այդ հանգամանքը կապ ունի մի կողմից համաշխարհային տնտեսության շարունակվող անդամանատության հետ, մյուս կողմից խորհրդացին անտեսությանը համաշխարհային շրջանառությունից գուրս ճգելու հետ, վոր գեռ շարունակվում ե, և յերրորդ կողմից՝ ամենահզոր կապիտալիստական պետության ու ամենազոր կապիտալիստական որգանիզմի—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ

հանգների կղզիացման հետ, վորպիսի փաստը դեռ շարունակում է իր գոյությունը։ Սակայն այդ բնորոշ և հենց այն պատճառով, վոր ներկա ճգնաժամը կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամն է, և վոչ թե կապիտալիզմի նորմալ ընթացքի համար սովորական և բնորոշ արդյունաբերական ճգնաժամ։ Այդ ճգնաժամը շատ հաճախ և յերեան գալիս, և յերբեմն ել միանգամայն անհավասարաշափ տարրեր կողմերից։ Ծնկասկած է, վոր մի ամբողջ շարք յերկրներում տնտեսական կոնյուկտուրան բարձրանում և բայց մեր հիշատակած «սովացող» ճգնաժամը բուն և զնում նրանց քաղաքական որգանիզմի բոլոր ծակոտիներում։ Այդ դեռ չի նշանակում, թե այդ բնորոշ յերկույթները իր հերթին չի հենվում ուրիշ տնտեսական պատճառների վրա, բայց այնուամենայնիվ նա ստիպում է մեղ առանձնապես հիշել ավյալ յերկույթը։

Անգլիայի եւ Ֆրանսիայի քաղաքական դժվարություններն աճել են

Կապիտալիստական դասակարգի այդ գժվարությունների ընդհանուր գումարն առանձնապես աճել և Անգլիայի և Ֆրանսիայի նկատմամբ, չնայած նրանց տնտեսական կոնյուկտուրայի բարձրացման։ Մենք տեսնում ենք, որինակ, վոր անգլիական բուրժուազիան այս բոլորի ստիպված և շատ ավելի ուժեղ պայքար մղել անգլիական գաղութների և դոմենյոնների (Կանադա, Ավստրալիա և այլն կենտրոնախույս միտումների դեմ։ Մենք գիտենք, վոր առաջին դեպքն ե անգլիական պատմության մեջ, յերբ հույն-թյուրքական պատերազմի ժամանակ Լոյդ Չորջի ուղղակի կոչին—պատրաստ լինել պատերազմի—անգլիական դոմենյոնների մի քանիսը հրաժարվեցին արձագանք տալ։ Մենք շատ լավ գիտենք, վոր Կանադան, անգլիական կայսրության ամենախոշոր և ամենաուժեղ գոմենյոններից մեկը, առանձին դաշնազիր և կնքել առանձին քաղաքական համաձայնություն կազմել Ամերիկայի հետ, և այդպիսով ցայտուն կերպով արտահայտել և իր կենտրոնախույս միտումները։ Գիտենք նաև, վոր վերջերս ավարտված համարիտանական համապետական կոնֆերենցիայում, վորին մասնակցում եյին բոլոր գաղութների և դոմենյոնների ներկայացուցիչները, անգլիական համապետական կառավարությանը չհաջողվեց մշակել և վոչ մի ընդհանուր պլատֆորմ՝ դրական ուղղությամբ։ Մաքսային քաղաքականության, տարիփի և այլն հարցերը դրա-

կան իմաստով չուծվեցին։ Այդտեղ ստեղծված դրությունն անգլիացիները համարում են, բացասական միության դրություն, այսինքն մի գրություն, վոր բնորոշում ե, թե ինչ չպետք է անել և վոչ թե՝ ինչ համատեղ աշխատանքի պիտի ծառայել։ Մենք տեսնում ենք նույնպես, վերջին տարիս, վոր ժամանակավոր անկումից հետո, նորից ուժեղացել ե ազգային-հեղափոխական շարժումը Հնդկաստանում։ և այդ շարժման զարգացման բարեհաջող հեռանկարները վոչ մի կասկածի չեն յենթարկվում։ Տեսնում ենք նաև, վոր արտաքին քաղաքականության բնագավառում Անգլիայի համար հարաբերությունները դժվարացել են։ Նրա հարաբերությունները թրանսիբայի հետ այնքան են սրվել, վոր նույն իսկ այնպիսի չափավոր մարդիկ, ինչպես հայտնի տնտեսագետ Կեյնսը, հայտարարում են, թե Անգլիայի ինդիրներն են լինելու վոչ թե աշխատակցել ֆրանսիային, այլ հաղթել նրան։ Քաղաքականության մեջ շատ զգաստ լոյդ Չորջն Ամերիկայում արտասանած իր ճառում հայտարարել ե, թե «Համառում ե ժամը, յերբ ստիպված ենք լինելու նորից պատերազմել կինկոնի սկզբունքների համար։ Յերբ այդ ժամը կը համի, ամերիկյան և անգլիական դրոշակները զորաժողովի վայրեր կը հանդիսանան այդ կրվում։ Այս խոսքերից չի կարելի նոր քաղաքական ճգնաժամի աճումն չզգալ արտաքին հարաբերությունների բնագավառում։

Անգլիական բուրժուազիան մեծ դժվարությունների առջև և կանգնած նաև սոցիալ-դասակարգային կովի շրջանում, քանի վոր փաստ և մի կոմից բանվորական կուսակցության ազդեցության աճումն, վորը հող նախապատրաստեց Մակդոնալդի կառավարության համար, և մյուս կոմից կոմմունիստների ուժեղանալը, վորոնք առաջ համարյա աննկատելի եյին։

Կամ վերցրեք, որինակ, մյուս պետությունը՝ ֆրանսիան։ Կապիտալի ամրացումը, յեթե հարցը շատ պարզ հասարակ (պրիմիտիվ) ձևով դնելու լինենք, վորոշվում է տնտեսական հառաջադիմությամբ, վորն արտահայտվում է արտադրության աճման, գործազրկության կրծատման մեջ և այլն։ Սակայն ուրիշ կերպարանք և ստանում այդ պրոբլեմը, յերբ մենք վերցնում ենք սոցիալ-քաղաքական ու տնտեսական հարաբերությունների ամբողջ կոմպլեքսը, ամբողջ գումարը։ Վերջին շրջանում մենք տեսնում ենք պետական պարտքի հսկայական աճումն ֆրանկի ճակատագրական անկումն, վորն ի դեպ և ասել արդեն անցնում ե, հարկերի հավելումն 20 տոկոսով, թանգության աճումն 30 տոկոսով,

միջին խավերի քայլայումն, իրական (ըյալ) աշխատավարձի անկումն և այնու Մյուս կողմից, արտաքին քաղաքականության մեջ մենք տեսնում ենք հարաբերությունների լարումն Անգլիայի հետ, տեսնում ենք հակայական ծախրեր՝ Խուրի բռնազրավման (ոկուպացիա) հետեանբով և այլ և այլն:

Այս բոլորից հետեւմ ե, վոր չնայած տնտեսական և արտադրական շրջաններում տեղի ունեցած վորոշ վերելքին, մենք տեսնում ենք միաժամանակ մի ամբողջ շարք դժվարություններ հնաց նույն յերկրների համար: Այդ դժվարությունները լուծումն չգտան նախընթաց տարում. և յեթե կուզեր, հենց այդ և այդ յերկրների կոնյուկտուրայի վորոշ ինքնատիպ բնույթը: Յեթե ընդհանուր գումարը տանք այն բոլորի, ինչ վոր յես սասացի ներկա դեպքում քաղաքականության վերաբերմամբ, ինձ թվում ե, կարող ենք ձևակերպել այսպիս—անցըքերի կիսորոնը համեմատաբար և պայմանորեն փոխադրվում ե գեղի Արևուտք և վոր այդ և հնաց ինքնատիպ յերեւյթը, վոր սաեղծվում և այժմ միջազգային քաղաքական կոնյուկտուրայում:

### Բուրժուազիային հարկավոր և ժամանակավոր հանգիստ

Յեթե այս յերեւյթներին մոտենալու լինենք բուրժուազիայի և բանվոր դասակարգի փոխարաբերության տեսակիտից, և հարց տանք, թե ինչն է այստեղ ինքնատիպ և ինչն է նոր՝ համաձայն մեր վերը տված վերլուծման, ինձ թվում ե, վոր կարելի յե ձևակերպել բուրժուական քաղաքականության տեսակետից, մասնավորապիս այսպիս, — բուրժուազիան կարիք և զգում այժմ ժամանակավոր հանգստի: Նա այս ըռպելիս կարիք և զգում ժամանակավոր հանգստի, վորպես զի աշխատի վերականգնել իր տնտեսականությունը, վորն այսպիս սասած վերականգնվում է: Իսկ զրա համար բուրժուազիային հարկավոր և առաջին հերթին լուծել յերկու խնդիր. — առաջին՝ ջանալ այս կամ այն կերպ համաշխարհային տնտեսականության շրջանառության մեջ զրավել Ամերիկային և յերկուրդ այս կամ այն կերպ համաշխարհային տնտեսական շրջանառության մեջ առնել մեր Խորհրդային Միու-

թյունը:

Ճիշտ ե, այստեղ կան մի շարք տատանումներ: Ճիշտ ե, ալստեղ չկա վոչ մի ընդհանուր տնտեսական քանականություն: Նույն իսկ զուտ տնտեսական քաղաքականության շրջանում

բուրժուազիան հաճախ տարրութերվում և ազատ առեսրի և պրոտեկցիոնիզմի<sup>\*</sup>) միջև Սակայն բոլորովին պարզորոշ և վերը հիշատակած միտումը՝ վորպես կապիտալիզմի վերածնության առարկայական պահանջ՝ շրջանառության մեջ առնել Ամերիկային և մեր Միությունը: Դրա հետ միաժամանակ ընդհանուր կապիտալիստական հարաբերությունների վերականգման նպատակով հարկավոր և հանգստացնել մասսային և թևկուղ մի առերելույթ ընդհանուր պլատֆորմ ստեղծել բուրժուազիայի և մասսայի վորոշ խավերի միջև: Այդ նպատակով Խորհրդային Միության ճանաչման լողունզը միանգամայն անզնահատելի դեր և խաղում բուրժուազիայի համար:

### Կոիվ միջին խավերը գրավելու համար

Կարելի յե այս յերեւյթին ուրիշ ձևակերպություն և տալ, յեթե խնդրին մոտենանք սոցիալ-դասակարգային տեսակետից: Կարելի յե ասել, վոր բուրժուազիան այժմ, ինչ ել լինի, իր գործելակերպի ընթացքում կարիք և զգում միաձույլ ճակատի: Կարելի յե ասել, վոր կան յերկու ուղղակի հակադիր խնդիրներ. — բուրժուազիան ձգտում և վերականգնել կապիտալիզմը, իսկ կոմմունիստական կուսակցությունը ձգտում և տապալել կապիտալիզմը: Ներկա մոմենտը, մեծ պայքարի մոմենտ և միջին խավերին—գյուղացիությանը և բանվոր դասակարգի մի մասին—գրավելու համար: Յեթե կոմմունիստներն այդ նպատակով կիրառում են միաձույլ ճակատի քաղաքականությունը, ճիշտ նույն ձեռվ ել բուրժուազիան և կիրառում իր կողմից նույն միաձույլ ճակատի գործելակերպը:

Ինձ թվում ե, վոր միաձույլ ճակատի այդ գործելակերպը, վոր բուրժուազիայի կողմից մի մանյովը—քաղաքականություն եր բանվորների տատանվող խավերին և մասր բուրժուական միջին խավերին իր կողմը գրավելու համար, արտահայտվում և մեզ հայտնի յերկու գլխավոր ձեռնով. մի կողմից սոցիալիստների հետ կոալիցիոն (համագործակցություն) և մյուս կողմից ֆաշիզմով:

\* ) Պրոտեկցիոնիզմ—Ազգային արդյունաբերության պետական պաշտպանություն՝ ընդդեմ ոտար մրցակցության՝ մաքսերի և այլ միջոցներով:

Ժ. Թարգ.

## ԹԱՇԻՋՄ ՅԵՎ ԿՈՍԼԻՑԻԱ ՍՈՅԻԱԼԻՍՆԵՐԻ ՀԵՏ

Ֆաշիզմը և կոռալիցիան սոցիալիստների հետ, այսինքն ձախ բլոկային գործելակերպը և ֆաշիզմի գործելակերպը ժամանակավոր հանգիստ ձեռք բերելու տեսակետից միևնույն իմաստն ունեն, քանի վոր ֆաշիզմի եռթյունը միմիայն բռնությունը չե, ինչպես ներկայացնում են մի քանիսը: Ֆաշիզմը մի մեթոդ ե, վորը վորոշ չափով միանալու համաձայնություն (բլոկ) և յենթադրում և դեպ իրեն ցանցն և քաշում ժողովրդական մասսաների վորոշ մասը: Ֆաշիզմի այդ առանձին բնավորության, ինչպես նաև, հետեւարար, ձախ բլոկային քաղաքականության մեջ յերեան և գալիս բուրժուազիայի նույն առարկայական պահանջը—մասսաների վորոշ շրջանի գրավումն կապիտալիզմի վերածության գործն ավելի առաջ տանելու համար: Այստեղից ել հենց բղխում և համաձայնականության այն յուրահատուկ ժամանակաշրջանը կամ «Պացիվիզմը» (խաղաղասիրություն) յեթե կուզեք, վորն այնպես բնորոշ ե և ինչ վոր նորություն և ներկայացնում ամբողջ միջազգային քաղաքական կյանքում: Այս համաձայնական պացիվիզմը—լիբերալ բուրժուազիան ե, պլյուս լիբերալ բանվորական քաղաքականությունը:

Նայեցեք իրոք այն բնորոշ լոգունգներին, վոր հրապարակ եր հանել բուրժուազիան ընտրություների նախորյակին: Այսպես անգլիական լիբերալների լոգունգներն եյին գործակցությունն միացյալ նահանգների հետ, պարտահատուցման (ընդպարացիոն) հարցի արագ լուծումն և այսպես կոչված հարաբերությունների լիակատար վերականգումն Խորհրդային միության հետ: Նույնը նաև Փրանսիայում:—պարտահատուցման հարցի կանոնավորումն, Խորհրդային միության լրիվ կամ կիսատ ճանաչումն: Նույն լոգունգներն ենք տեսնում նաև ծափոնիայում՝ նոր կարինետի կազմակերպման և նրանց առաջ տարվող պայքարի ժամանակը Մոտավորակես նույն ձեռվ, թեև վոչ նույնքան վատ կերպով, առաջ ե ընթանում զարգացումը նաև Ամերիկայում: Նոր կուսակցությունը, վոր հանդես և գալիս պատմական ասպարեզում, հավանորեն առաջ կը գնա նույն ձեռվ: Սրա մասին հետո կը խոսենք:

Անցքերի այս ամբողջ ընթացքից մենք բոլորովին պարզ կերպով տեսնում ենք, թե ինչպես միանգամայն անհնարին և կիրառել հին շաբանը՝ բազմազան նոր քաղաքական կառուցվածքները գնահատելիս: 1918—19 թվին անցքերի զարգացման ըն-

թացքն ամեն մի յերկրում մենք պատկերացնում եյինք մեզ մոտավորապես մեր յերկրի որինակով:—ահա կերենսակին, կորնիլով—սոցիալ-դավաճանները—կապրեն յերկու տարի ևս, հետո նրանց կը փոխարինեն կոմմունիստները—և վերջացմա՛: Սակայն բանից գուր յեկավ, վոր միջազգային բուրժուազիան պահեստում մեծ ուժ ունի և ել ավելի շատ մեթոդներ: Միթե կարելի յե ընդհանուր ուսւական շրջանակներում պարփակել այն բոլոր անցքերը, վոր տեղի ունեցան վերջին տարում—Մակղնալդի կառավարության դրությունը, կամ «ձախ բլոկ» ֆրանսիայում և այլն: Իսկ թվում ե, վոր այս կերենչչինա չի, վոչ ել նոսկե: Այս բոլորովին յուրահատուկ մի ձե ե, վոր բղխում և ներկայումս գոյություն ունեցող միանգամայն յուրահատուկ դրությունից: Հետաքրքիր ե հիշել նաև այստեղ յեղած վորոշ ընդհանուր սրբնաչափությունը: Յես ասացի, վոր բուրժուազիան այս բոպեյիս պետք ե տանի միաձույլ ճակատի յուրահատուկ գործելակերպ: Այդ գործելակերպն արտահայտվում և ֆաշիզմի ևնոր ձախ—բլոկային որինստացիայի ձեռվ: Միանգամայն պարզ ե, վոր այստեղ կա վորոշ որինաչափություն այն հանգամանքում, վոր այդ բլոկային գործելակերպը զարգանում և ֆաշիզմի ձեւ տակ այն յերկրներում, վորոնք շատ են քայբայվել պատերազմից, և ուր գասակարգային կոիվը համեմատար սուր բնույթ ե ստացել: Յեվ ընդհակառակը այն յերկրներում, վորոնք բիչ են տուժել պատերազմից, և ուր գասակարգային կոիվը սուր կերպարանք չի կրում, տեսնում ենք, վոր այդ միաձույլ ճակատի գործելակերպը ձախ բլոկային որինստացիայի ձեւ ե ընդունում: Այդ ձեւ հատուկ ե ավելի կայուն խմբավորումներին, վորոնք նոր են միայն հանդես գալիս պատմության ասպարեզ ավելի քննադատական հարցերով:

Ահա այն փոփոխությունները, վոր առաջացել են միջազգային քաղաքականության շրջանում: Ընդհանուր առմամբ, յեթե մենք միատեղ զնահատելու լինենք յերկու մասերը—թե տնտեսական կողմը և թե միջազգային քաղաքականը—կը տեսնենք, վոր այստեղ ընդհանուր գնահատության դեպքում բացարձակապես չենք կարող ասել, թե տնտեսական ճգնաժամի պրոբլեմը, կապիտալիստների տեսակետից հենց՝ արդեն վճռված ե դրական իմաստով: Յեվ յեթե մի շարք յերկրներում տնտեսական բնագավառում մենք բարելավումներ ենք տեսնում, գրանց փոխարեն մի ամբողջ շարք ընդհարումներ ենք տեսնում մյուս բնագավառներում, վորոնք գնալով ավելի և ավելի յեն սրվում:

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՎԵՐԱՆՈՐՈԴՎԵՑ Ի ՀԱՇԻՎ ԼԱՅՆ ՄԱՍ- ՍԱՆԵՐԻ ԱՂՔԱՏԱՑՄԱՆ

Ընկերներ, յերբ կապիտալիզմը կարողացավ ելի շարունակել իր գոյությունը վորպես տնտեսական սիստեմ, ապա չնորհիվ ամենից առաջ լայն մասսաների աղքատացման և քայքայման, վորոնց հաշվին կապիտալիզմը վերանորոգվեց, կը բերեմ մի քանի թիվ, վորոնք շատ լավ են արտահայտում այդ պրոցեսը. Վերցնենք Գերմանիան, ուր գործազրկությունը արագորեն կրճատվում է, և ուր կապիտալիզմի տնտեսական «առողջացումը» միանգամյան պարզ ու անկասկածելի պրոցես է, Յեթե նայենք 1924 թ. մարտի աշխատավարձի շարժմանը, կը տեսնենք, վոր քիմիական արդյունագործության (ինդուստրիա) մեջ արևեստավորների աշխատավարձը կրճատվել է 30 տոկոսով հանդեպ 1923 թ., իսկ նույն ճյուղի բանվորների աշխատավարձը՝ 18 տոկոսով. պետական ձեռնարկություններում վորակյալ բանվորները 40—44 տոկոս ավելի, իսկ անվորակ բանվորները 23 տոկոսով են պակաս ստանում, քան 1923 թվին. Յեթե վերցնենք բանվորական որը, վորը մեղալի մյուս կողմն և ներկայացնում նույն «առողջացող» Գերմանիայում, կը տեսնենք բանվորական որի հավելման բնորոշ թվեր. Վերցնում եմ բանվորական ժամերի շաբաթական քանակը. — հյուսիս արևմբույսն ըայոնում—48 ժամ 1923 թվին, իսկ այժմ 57½ ժամ. — 1924 թվի համար վերցնում ենք համեմատաբար մի աննշան ժամանակաշրջան, այսինքն 1924 թվի առաջին ամիսները. Բերլինում 1923 թ. աշխատում եյին 48, իսկ այժմ 54 ժամ. Համբուրգում 1923 թվին աշխատում եյին 48, այժմ 54 ժամ. Բրեմլավլում 1923 թ. 48, այժմ 54 (կարդում են հետևյալ թվերը):

Բնորոշ ե, վոր աշխատավարձի անկումն ու բանվորական որի հավելումը բավական համաչափ են առաջադիմում հետևոկտեմբերյան ամիսներին, վոր անկասկած կապ ունի բանվոր դասակարգի պարտության հետ:

Անգլիայում, այդ համեմատաբար, շատարյուն (վոչ սակավարյուն) կապիտալիզմի յերկրում, արտադրությունը բարձրանում է: Սակայն այստեղ ևս մի շարք ճյուղերում (որ քարածխի արդյունաբերության մեջ) բանվորների իրական (ըյալ) աշխատավարձն ընկել է 1924 թ. 75—80 տոկոսով՝ հանդեպ մինչպատերազմյանի:

Ֆրանսիայում գործազրկությունն ինչպես տեսնում ենք խիստ կերպով ընկել ե, արտադրությունն ել աճում ե, բայց և

այնպես բանվորի, որինակ ջուլհակի աշխատավարձը ավելացել է միայն 0,10 տոկոսով, այն ինչ միենույն ժամանակ թանկությունն աճել է ¼-ով: Փարիզի շրջանի յերկաթագործի (սլեսար) աշխատավարձը ավելացել է 10 տոկոս, այն ինչ անդի նյութերն ու բանվորական բյուջեի մեջ մոնող մյուս ապրանքները թանկացել են 50 տոկոս:

Ընկերներ, յես խոսելու չեմ մի շարք այլ յերկրների մասին, բայց բնորոշ ե, վոր այնպիսի յերկրներն անդամ, ինչպես Վենդրիան, Ռումինյան կամ Լեհաստանը, նույն միտումն են դրսեորում: Այս պատկերը շատ պարզ ցույց է տալիս, վոր կապիտալիստական հարաբերությունների վորոշ առողջացումն տեղի ունի կապիտալիստների՝ բանվոր դասակարգի վրա գործ դրած իրական, միանգամյան իրական և շատ ուժեղ ճնշման հետևանքով և ոժանդակությամբ: Շատ հետաքրքիր կը լիներ հետևել մյուս պրոցեսին, այսինքն գյուղացիությանը բռնազրավման (եքսպլուատիացիա) յենթարկելու պրոցեսին, բայց գժրախտաբար այդ նյութի վերաբերյալ պակասում են շատ կամ թիւ ճիշտ վիճակարական տվյալներ, վորոնցով կարելի լիներ դատել այդ մասին: Համենայն դեպս բոլոր հետազոտող—տնտեսագետները, վորոնք հետեւում են այդ պրոցեսին և գնահատում գրությունը, մի շարք անուղղակի տվյալներով հաստատում են այդ պրոցեսի գոյությունը: Դրա հետաքրքիր տեսական բանաձեն և տալիս ընկ. Վարգան, վորն ընդգծում է կապիտալի կուտակման և յերկրի հարստության միջև յեղած տարբերությունը: Ներկայումն կատարվում է կապիտալի կուտակումն և դրա հետ կողք-կողքի յերկրի հարստության կը բաժառումն, կապիտալի կուտակումը կատարվում է ի հաշիվ ունեորների բռնազրավման (եքսպլուատիացիա): Կապիտալիստների մի փոքրիկ խմբակ մի շարք մեթոդների ոժանդակությամբ բըռնազրավման յենթարկելով մնացածներին, կապիտալ և կուտակում. — իսկ ամբողջ ազգն այդ միջոցին աղքատանում է: Այդ պրոցեսն ամենաբնորոշն է այժմս տեղի ունեցող բոլոր պրոցեսներից:

Դասակարգային կովի սրվելը .

Իսրայիլ հասկանալի յե, վոր կապիտալիստական հարաբերությունների այդ ֆոնի վրա, չնայած կապիտալիզմի առողջացման, մենք տեսնում ենք դասակարգային կովի սրվելը, վորը կարող է կասկածելի դարձնել մյուս բոլոր դուռ—արտադրական բարեկա-

վումները: 1921 թ. մեն վկա եյինք, թե ինչ հսկայական բանվորական շարժումն առաջացավ մի շարք ամենախոշոր արտադրական ճյուղերում: Մենք այժմ ել առենում ենք մի շարք հետաքրքիր որինաչափ յերևոյթներ, վորոնց հիշելը վնասակար չի լինի: Զնայած այն բանին, վոր համաշխարհային անտեսությունն այժմ առանձին մասերի յե բաժանած, և վոր յուրաքանչյուր յերկրում գոյություն ունի առանձին անտեսական կոնյուկտուրա, զանազան յերկրներում տեղի յեն ունենում մի շարք զուգահեռ պրոցեսներ, վորոնք զուգահեռ են հենց այն պատճառով, վոր այդ յերկրները ապրել են միատեսակ ցնցումներ, իսկ նրանցից վոմանք՝ նաև հեղափոխություն: Այդ յերկրների համար ընդհանուր եր կապիտալի հարձակումը, վորը շարունակվում է դեռ այժմ ել, և վորի ծնուղ առնելու մասին մենք խոսեցինք: Յեկ ահա այժմ, վորպես կապիտալի այդ հարձակման հետեւանք, տեղի յե ունենում պրոլետարիատի ապրուստի նվազումն, մանր բուրժուազիայի բռնագրավումն (երապրոպիտացիա), գյուղացիական հարածուն բռնագրավումն: Այդ բոլորը տեղի յե սւնենում զանազան ձերով—աշխատավարձի նվազման և բանվորական ժամերի հավելման, այլև թղթե դրամների ինֆլյացիայի \*) ձեերով: Վերջին ձեը շատ բնորոշ ե ֆրանսիայի համար, ուր փողի արժեքի անկումը և նրա հետ միասին հարկերի աճումը հսարավորությունն են տալիս բուրժուազիային հավելյալ բանակով փող դուրս կորպել միջին և մանր բուրժուազիայից և պրոլետարիատից:

Այն հանդամանքից, թե կապիտալիզմի առողջացումը կարող ե սկսվել բանվոր դասակարգի վրա ճնշումն գործ դնելու շնորհիվ, բղխում և այն հրմանական յերևոյթը, վորը բնորոշ ե այս ամբողջ կոնյուկտուրայի գնահատման համար, այսինքն՝ վոր կապիտալի այդ առողջացումն առաջին սկսել ե բանվոր դասակարգի աշնանային պարտությունից հետո: Մյուս կողմից պարզ ե և այն հանգամանքը, թե ինչու ընդհանությունը դասակարգային կովի այն ուժեղ շարժումը, վորը տեղի ունեցավ բանվոր դասակարգի վրա գործ զրված խստագույն ճնշման ժամանակաշրջանում: Բանվոր դասակարգի մի բանի ուժեղ հարձակումները տեղի ունեցան մոտավորապես միենույն ժամանակաշրջանում: Ամենաին պատահական չե, վոր անցյալ տարվան աշնանային ա-

\*) Ինֆլյացիա—թղթե դրամների հեղեղ—անսահման քանակությամբ թղթի դրամ կտրելը:

միաներին մենք տեսանք կապիտալիստական ճակատի կատաղի ճեղման այնպիսի փորձեր, ինչպես գերմանական անցքերը, լեհական անցքերը, բոլղարական անցքերը, ինչպես նորվեգիական գործադուլը, վորը շարունակվում է մինչև որու Գերմանիայում այդ ժամանակ սրվեց և ֆինանսական, և արդյունաբերական, և արտաքին-քաղաքական, և դասակարգային ճգնաժամը: Լեհաստանում հենց այդ ժամանակ ստեղծվեց այնպիսի զրություն, վոր թանկությունն աճեց 200 տոկոսով, շրջանառության մեջ յեղող դրամների արժեքը, վոր 1921 թվի վերջին 83 միլիոն գոլար եր հաշվում, 1923 թ. հոկտեմբերին հավասարվել եր 13 միլիոն գոլարի, թղթե դրամների խոշոր քանակ հրապարակ նետելու պատճառով, մհտաղազործների աշխատավարձը ընկավ և հավասարվեց մինչպատերազմյանի 55 տոկոսին, վորի պատճառով աղմկել սկսեցին պրոլետարիատի նույն իսկ այնպիսի խավերը, ինչպես են յերկաթուղայինները և պիտական ծառայողները, այսինքն ամենապահպանողական տարրերը: Սեր ընկերներն, որինակ, մեզ հաղորդում են, վոր այդ ժամանակ գործն այնաեղ հասավ նույն իսկ, վոր զինվորական մինիստրության քաղաքացիական շինովնիկները ընդհանուր գործադուլի բանաձև հանեցին: Պատահական չե այս բոլորը: Սրանց պետք ե ավելացնել նաև կրակովի պարատամբությունը՝ նրա հետ կապված բոլոր անցքերով: Բոլղարիայում սեպտեմբերին տեղի ունեցավ բանվորների և գյուղացիների ապատամբություն՝ մեր կուռակցության ղեկավարությամբ: Գերմանական ճգնաժամը, լեհական ճգնաժամը, բոլղարական ճգնաժամը, նորվեգիական ճգնաժամն այն պատճառով միենուն ժամանակամիջոցում տեղի ունեցան, վորովհետև ամբողջ միջազգային կոռուցվածքի զարգացման մեջ կար ընդհանուր որինաչափություն: Այդ անցքերի գնահատության վրա յես կանգ կառնեմ հետո, այլ կապակցության մեջ: Կարենոր չեմ համարում բերել այս շրջանի վերաբերյալ փաստերը, վորովհետև դուք բոլորդ ել լավ ծանոթ եք թերթերից այդ փաստերին:

### ՄԵՐ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դուք շատ լավ գիտեք նույնպես, վոր մենք պարտություն կրեցինք մի շարք յերկրներում: Կոմմունիստները պարտություն կրեցին Գերմանիայում, լեհաստանում, Բոլղարիայում: Կոմմունիստները պարտություն չկրեցին միայն նորվեգիայում, ուր կոիվը դեռ շարունակվում է ամենամեծ համառությամբ: Գործա-

դուն այնտեղ, վոր սկսվել է 1923 թվի հոկտեմբերին, ներկայումս ընդգրկել է մի ամբողջ շարք արտադրական ճյուղեր. փետրվարին գործադուլին մասնակցող բանվորների թիվն եր 40 հազար, իսկ այս ըոպեյին՝ 60 հազար, վորը կազմում է վոչ ավել, վոչ պակաս, բան նորվեգիական արդյունաբերության մեջ աշխատող բոլոր բանվորների կեսը, Յոթ ամիս ե, վոր շարունակվում է այդ կորիվը, և ինձ թվում է, հիմք չկա ասելու, թե այդ կորիվը պարտություն է կրելու. Ամեն հիմք կա կարծելու, վոր այդ կորիվը վերջանալու յե բանվոր դասակարգի հաղթությամբ. Մնացած յերեք գծի վրա մենք պարտություն կրեցինք, և այդ պարտության փաստը ձեզ բոլորիդ հայտնի յե:

Այստեղ, ընկերներ, յես մտենում եմ արդեն հարցի մյուս կողմին, վորը պետք է իր վրա գրավի մեր համագումարի ուշադրությունը և վորին պետք է մենք լուծումն տանք, վորովհետեւ այդ արդեն վերաբերում է անմիջապես և կուսակցական ղեկավարության, և այն դիրքին, վոր գրավում է այստեղ մեր կուսակցությունը,

### Կուսակցական ճգնաժամերը յեվ նրանց պատճեռը

Հոկտեմբերյան պարտություններից հետո մենք մի շարք ճգնաժամեր ունեցանք. այս, ինչ վոր մեր հակառակորդներն անվանում են Կոմիտենի ճգնաժամ: Ինձ թվում է, վոր մեր ներկուսակցական ճգնաժամը չի կարելի դուրս կորզել այդ ընդհանուր շղթայից: Մեր ճգնաժամը մյուս կոմ. կուսակցությունների ներքին ճգնաժամերի ընդհանուր շղթայի մի ողակն է: Նա վորոշողակն է այն շղթայի, վորը ստեղծելից առաջին հերթին մի շարք ճակատներում կրած պարտությունների հետևանքով: Թանի վոր այս ինդիբը շոշափում է մի շարք ցավոտ հարցեր, վորոնք առաջ են յեկել մեր սեփական շրջանում, ուստի թույլ տվեք նրա վրա պիտի մանրամասն կանգ առնել:

Ընկերներ, յես այդ կուսակցական ճգնաժամերին մոտենում եմ ամենից առաջ նրանց ընդհանուր պատճառների տեսակետից: Նրանք բոլորն ել մի ընդհանուր նախադրյալ ունեյին: Այդ ընդհանուր նախադրյալը նույն եռթյունն ունի, միայն տարրեր ձեփովնայած այն բանին, թե մենք Արեմտա-Յեվլուպական կուսակցությունների մասին ենք խոսում արդյոք, թե մեր Ռուս. Կոմ. կուսակցության մասին:

Մեր կուսակցություններն Արևմուտքում, վորոնք դեռ իրենց ներսում ունեն վորոշ մնացողներ, հիվանդություններ, վորոշ տրադիցյոն պոչեր, սոցիալ-դեմոկրատիզմի յերանգավարություններ կանգնած եյին անհրաժեշտորեն մանր բուրժուազիայի և պրոլետարիատի մանր-բուրժուազիան գաղափարախոսությամբ (իդյոլոգիա) վարակված մասի հետ անմիջորեն կապ հաստատելու խնդրի առջև: Այդ խնդիրը բղխում է մեր կովի ամբողջ ընթացքից: Ի՞նչ է իրոք միաձույլ ճակատի գործելակերպը: Դա վոչ այլ ինչ է, յեթե վոչ բանվոր դասակարգի առաջապահի (ավանգարդ), նրա կոմմունիստական կուսակցության կազմը բանվոր դասակարգի այն խավերի հետ, վորոնք վարակված են մանր-բուրժուազիան գաղափարախոսությամբ, վորոնք նոր են հեռանում մանր բուրժուազիան խավերից և վորոնց բանվորական կուսակցությունը պարտավոր է տանել իր հետեւից, յեթե նա ուղում է մասսայական և հաղթական կուսակցություն լինել:

Միաձույլ ճակատի պրոբլեմը—դա բանվոր դասակարգի մանր-բուրժուազիան մասի և մանր բուրժուազիայի հետ ունենալիք կապի պրոբլեմն է: Բայց այդ դեռ չի նշանակում, թե միաձույլ ճակատ անցկացնողը և կիրառողը պետք է մանր բուրժուազիան անձնավորություն լինի: Այն հանգամանքը, վոր մեր՝ սոցիալ գենոլոգատիզմի մնացորդներ ունեցող կուսակցությունները ստիպված եյին կապ հաստատել մանր բուրժուազիան ազգեցություններով վարակված խավերի կամ ուղղակի մանր բուրժուազիայի հետ, հենց այն վտանգն է, վոր վոչ վոք չի կարող հերքել իհարկե, դա ապացույց կամ հիմք չե ընդդեմ միաձույլ ճակատի, բայց մի վտանգ է, վորին յենթակա յեն մեր կուսակցությունները, յերբ նրանք կատարում են իրենց ռազմական և տակտիկական շարժումները:

Յեթե վերցնենք Ռուս. Կոմ. կուսակցությունը, կը տեսնենք այստեղ ևս նույն բանը, այլ ձեռվ, այլ գրությամբ, այլ սոցիալական բովանդակությամբ: Առաջին՝ մենք կուսակցության մեջ հավաքելենք դեռ անմշակ տարրը, Այդ մեկը: Յերկրորդ՝ կապի պրոբլեմը մանր բուրժուազիայի հետ մեզնում ևս գոյություն ունի, թեն ձիշտ է, այլ ձեռվ: Մենք պետք է մանր բուրժուազիային հետ մեզնում ևս գոյություն ունի, մեր հետեւից տանենք բոլորովին այլ գործի համար, քան Արևմայան Յեվլուպայում է: Այստեղ մեր կուսակցությունները պետք է մանր բուրժուազիային իրենց հետեւից տանեն կապիտալիզմի տապալման գործը զլուխ բերելու համար. իսկ մենք այստեղ՝ սո-

Տիալիզմի կառուցման համար։ Սակայն նույն պրոբլեմն ե, միայն այլ ձևով, մատեմատիկական այլ նշանով։ Յեվ ինձ թվում ե, վոր հենց այդ ե ճգնաժամի ընդհանուր նախադրյալը։ Դա ճգնաժամի գործոն (ակտիվ) պատճառը չե, բայց դա ընդհանուր նախադրյալն ե, վորը վորոշ պայմաններում և վորոշ պատճառով կարող ե բյալիզացիայի յենթարկվել, իրականություն դառնալ։ Այդպիսի որական պատճառ կարելի յեւ տեսնել, իմ կարծիքով, կոմմունիստների հոկտեմբերյան պարտության մեջ։ Ինքնին հասկանալի յի, Խորհրդային Միության մեջ այդ հանդամանքը չափազանց բարդացավ այն տնտեսական ճգնաժամով, վոր ապրում ելինք մենք։ բայց այն հոգեբանական լրումը, (գեղրեսիա) վորն առաջացավ իրրե հետեանք գերմանական հեղափոխության վրա դրած մեծամեծ հույսերի վիճման, և գերմանական պրոլետարիատի նահանջի, այն ել առանց կովի—անպայման չափազանց մեծ ազդեցություն գործեց մեր կուսակցական շարքերի վրա։

Յեթե նայենք այդ հարցին սոցիալական տեսակետից, կը տեսնենք, վոր այստեղ պետք ե շոկել կապի պրոբլեմը մասն բուժուազիայի հետ։ Յեթե նայենք պատճառական տեսակետից, — դա մեր պարտությունն ե, վորը Խորհրդային Միության համար ել ավելի բարդացավ տնտեսական ճգնաժամով։ Յեթե մենք այդ պրոբլեմին նայենք ներկուսակցական կովի տեսակետից, կը տեսնենք, վոր դա մի կոփի ե կազմակերպչական և այլ հայացքների միջև, մի կողմից լենինի ավանդների և միուս կողմից այդ ավանդների շեղումների միջև։ Ահա հենց այդ հանդամանքը պատճառ հանդիսացավ, վոր մեր կուսակցական դիսկուսիան անցավ միուս բոլոր կուսակցություններին, և նրանք բուռն կերպով սկսեցին քննել մեզ զրագեցնող հարցերը։

Ուրիշ կերպ չեր ել կարող լինել։ Յեթե մնացած բոլոր կուսակցությունները բոլորովին այլ կերպ տրամադրված լինելին, և մենք բոլորովին այլ կերպ, այդ կուսակցությունները բավարար չափով իրենց սրտին մոտ չեյին ընդունի մեր դիսկուսիան։ Յեվ դա ամենին պատճառական չի։ Մի շարք պարտություններից հետո, հասկանալի յեւ ինքնին, մի շարք ընկերների մեջ առաջ յեկան ուժեղ հոռետեսական գծեր։ Այդ բնորոշ ե ամբողջ զրության համար, այդ բնորոշ ե այս ճգնաժամը գնահատելու համար։ Ահա թե ինչու, կրկնում եմ, մեր ներկուսակցական դիսկուսիան սեպացավ մյուս կուսակցությունների մեջ, որակարգի հարց դար-

ձավ, և այդ կուսակցություններն սկսեցին ամենաբուռն կերպով քննել մեր կուսակցական հարցերը։

Կոմինտերնի ամենատաջ տարրերը պաշտպանում են մեր ոպղողիցիան

Այժմ կարելի յեւ ասել, վոր՝ միջազգային մասշտաբով, յեթե հարց գնենք մեր ներկուսակցական տարրերությունների մասին, ընդհանուր առմամբ, կասկած չկա, վոր ամենաաջ տարրերը պաշտպանում են մեր ոպղողիցիան։ Յես այստեղ չեմ ցանկանում այսպիս ասած, վոչ սրել և վոչ ել գունավորել այս ինդրին վերաբերյալ հարցերի գումարը, բայց համենայն դեպս, յերբ մենք ավարտում ենք մեր կուսակցական կյանքի զարգացման ետապի դրության գնահատությունը, ինձ թվում ե պետք ե վորոշ հաշվեգումար տալ կուսակցական ճգնաժամը կոմմունիստական ինտերնացիոնալի շրջանակներում տեղի ունեցավ մի ամբողջ շարք կուսակցությունների մեջ։ Յեվ միայն մի գեղըում—նորվեգիական կոմ. կուսակցության մեջ—գործը հասավ պառակտման։ Այնտեղ բաժանումն այնքան սուր կերպարանք ստացավ, վոր գործը հասավ պառակտման։ Այնտեղ մենք ունենք յերկու կուսակցություն, և բնորոշ ե այն հանգամանքը, վոր այնտեղ, ուր ներքին բանավեճերն ավելի սուր եյին, կուսակցության անջատվող մասը, տրանժելիստները, յեթե նայենք խնդրին տրամարանական պատճառարանության տեսակետից, կատարելագես համերաշխում են մեր ոպղողիցիային։ Նրանք սիանում են մեր ոպղողիցիայի առաջադրած ներքին կազմակերպչական և այլ պահանջներին։ Տրանժելին անձամբ մի շարք հոդվածներ ե գրել, ուր նա համերաշխ և մեր ոպղողիցիային և ուր ասում ե, թե նա կողջուններ, յեթե կոմմունիստական ինտերնացիոնալի շարքերը կառուցված լինելին ոպղողիցիայի նախագծած ձևով։

Մենք կարող ենք մեր բոլոր կուսակցությունները շարքով գասավորել՝ ի նկատի առնելով ներկուսակցական պայքարի սրության աստիճանները։ Մայրագույն տեղը կը գրավի այն կուսակցությունը, վորը պառակտում ապրեց—դա նորվեգիական կուսակցությունն ե, նրանից հետո կը գա Փրանսիականը, շվեդականը և այնու Յեվ մենք տեսնում ենք ամենուրեք, վոր մեր կուսակցությունների վոչ ուղղափառ (որթողոկս) ըուշեվիկան թեր, բառի խկական իմաստով, վոր գործելակերպով ավելի պատեհապաշտ

(ոպպորտյունիստ) դիրք և գրավում (իսկ վոր տրանսմիլիստները պատեհապաշտ դիրք են գրավում, յերևում և միանգամայն պարզ կերպով նորվեգիայի բանվոր դասակարգի հսկայական տայրտորից), պաշտպանում և մեր ոպպողիցին, Յեղ յեթե շատ հաճախ, շնորհիվ այն բանի, վոր մեղ մոտ գործը բարդանում եր մի ամբողջ շարք շատ բարդ ու բազմազան հարցերով, վոր մեղ մոտ չկար կամ թվում և թե չկար այն բավարարաշափ նստվածքը, վորի վրա կարելի լիներ բոլորովին պարզ կերպով տեսնել, թե ուր և տանում ճանապարհը, ուր և տանում ոպպողիցին ուղին, —ապա ինձ թվում ե, բաժանումների ստուգումը մեր կուսակցության ներսում և նրանց համեմատությունը մյուս բաժանումների հետ մնացած բոլոր կուսակցությունների ներսում բավարար չափով ապացուցում եր, թե ում կողմն և ճշմարտությունը, Այդ բաժանումն անհերքելի յե, հերթել այն՝ չի կարելի:

### Կուսակցությունների բոլշեվիկացման պրոցես

Գիծ, միանգամայն պարզորոշ եւ Յեղ յեթե այն տեսակետից մոտենանք հարցին, թե ինչ են ներկայացնում այդ բոլոր ճգնաժամերը. — թե Ռուսաստանի կոմ. կուսակցության և թե կոմմունիստական Ինտերնացիոնալի մյուս կուսակցությունների մեջ, ինձ թվում ե, վոր կարելի յե այսպիսի բացատրություն տալ— դրանք ճգնաժամեր եյին, վորոնք ուղեկցում եյին այդ կուսակցությունների բոլշեվիկացման պրոցեսներին և ուղեկցվում նրանցով, Ամեն տեղ ել, ինչպես և մեղ մոտ, սկզբում կուսակցական մասսան, կարելի յե ասել շշմեց կուսակցական դիսկուսիաի ստացած ծավալով— ընթացքով: Հետո սակայն, յերբ հարցերն սկսեցին հետզեհետե ավելի և ավելի պարզ սկզբունքային-քաղակական բնույթ ընդունել, յերբ ամեն բան, ինչ վոր անձնական եր և այն, սկսեց աղոտանալ մասսաների գիտակցության մեջ և աննշան տեղ գրավել, հանդես յեկան պարզ կերպով քաղաքական սահմանավորման և զանազան յերանգավորումների ուրվագծերը (կոնտուրա), Նույնպիսի պրոցես եր նաև Արեմայան Յելլոպայում: Դա մեր կուսակցությունների բոլշեվիկացման պրոցեսն եւ, Պարտություններից հետո Արեմա-Յելլոպական կուսակցությունների ավելի քիչ կայուն մասը ցնցվեց, տատանվեց այն բացասական յերեւյթների ազդեցությամբ, վորոնք բղխում են միաձույլ ճակատի գործելակերպից, այն հանգամանքից, վոր մենք այս բոպե-

յիս մեր կողմն ենք ընդունում պրոլետարական գաղափարախոսության տեսակետից վոչ լրիվ չափով հետևողական և կայուն տարրեր: Այդ հասկանալի յե, Բայց չկա չարիք առանց բարիքի, և մենք տեսնում ենք, վոր կուսակցության բոլշեվիկացման պրոցեսը առաջ և ընթանում բոլոր յերկրներում ել:

### ՏԱՐԱՎԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵջ

Այժմ թույլ եմ տալիս ինձ կանգ առնել մի բանի ավելի մասնավոր բնույթ կրող հարցերի վրա: Յեթե մի շարք յերկրներում մեր ներկուսակցական տարածայնություններն ու դիսկունիաները վերաբերում եյին ներքին կազմակերպչական հարցերին, ապա այսպիսի յերկրում, ինչպես Գերմանիան և,—իսկ Գերմանիան շատ հասկանալի պատճառներով մեր ուշադրության կենտրոնն եր կազմում,—այդ տարածայնություններն (նրանք կային և մեր Ռուսաստանի կուսակցության ներսում) ընդգրկեցին Կոմմունիստական կուսակցության գործելակերպին, ուազմագիտության և կազմակերպության վերաբերյալ զանազան հարցերի մի ամբողջ խումբ: Ըսկերներ, յես այստեղ կանգ չեմ առնելու մանրամասն կերպով այդ հարցերի վրա: Նրանց վրա բավականաչափ կանգ ենք առել XIII կուսակցական կոնֆերենցիայում, վորի արձանագրությունները դուք բոլորդ ել ի հարկե, կարդացել եք: Յես այստեղ կը հիշատակեմ միայն յերեք գլխավոր հարց՝ այդ հարցերն ու տարածայնությունները ձեր հիշողության մեջ վերականգնելու նպատակով: Այդ հարցերն են—սաքսոնական փորձը կամ սաքսոնական կառավարության մեջ մտնելը, միաձույլ ճակատի գործելակերպի խնդիրը և այն, թե գերմանական կոմմունիստական կուսակցության մեջ վոր խումբը պետք ե պաշտպանել, վոր խմբի վրա հենվել, վոր խմբի վրա հույս դնել Այդ հարցերն ամենավիճելի և ամենակարեռ հարցերն եյին, և նրանց նկատմամբ մի շարք եական տարածայնություններ են յեղել թե մեր մեջ, թե մեր ներկայացուցչության մեջ, թե կոմինտերնի մեջ և թե գերմանական կուսակցության ներսում: Ըսկերներ, յես միայն կը հիշատակեմ, վոր մեր ներկայացուցչությունը կամ նրա մեծամասնությունը կոմմունիստական Ինտերնացիոնալում հարձակման եր յենթարկվում այն գնով, վորով հարձակման յենթարկվեց մեր կենտ. կոմիտեն ուսւական քաղաքականության և ներքին բա-

ղաքականության (ընդհանուր չափով) նկատմամբ, ճիշտ այնպես, ինչպես մի քանի ընկերներ մեղադրում ելին կենտրոնական կոմիտեյին, թե վերջինս յերկիրը կորստի և հասցրել, ճիշտ այդպես ել հայտարարություններ յեղան, թե կոմիտերնը պառակտեց և կորստի մատնեց գերմանական կուսակցության կենտրոնական կոմիտեն, վոր կոմիտերնը դրանով թեկ վոչ յերկիրը, — քանի վոր յերկիրը դեռ գերմանական պրոլետարիատի ձեռքը չերաց կոմմունիստական կուսակցության ամենաչըի ընկնող մասը, նրա հետ միասին ել գերմանական պրոլետարիատին հասցրեց կորստյան անդունդի ծայրը: Յեկ ճիշտ այնպես, ինչպես վոր մեր Խորհրդային յերկիրը և Խորհրդային Միությունը մի քանի ամսից հետո կորստյան անդունդի յեզրին չեյին, ճիշտ այդպես ել գերմանական կուսակցության մեջ մենք վոչ միայն պառակտումն չենք տեսնում իբրև հետևանք այդ «թույլ և անպետք կուսակցության ղեկավարության», այլ ընդհակառակը այժմս յերեան և յեկել շատ ավելի միացյալ ղեկավարող խումբ՝ քան նախորդ զարգացման ամբողջ ընթացքում: Յեթե շատ հաճախ մենք տեսել ենք, վոր կոփը գերմանական կուսակցության ներսում միանգամայն չտեսնաված ձևեր և ընդունել, յերբ կուսակցության կենտր. կոմիտեն ստիպված ե յեղել գնալ իր ամենատուժեղ և սերտորեն համարիմքված կազմակերպությունների դեմ, և յերբ կուսակցությունը ղեկավարության մշտապես անընդհատ (այնունո՞ւ) ճգնաժամ և ապրել, — այժմ տեսնում ենք, վոր կուսակցությունն, ընդհակառակը, գործում և ամենամեծ (մաքսիմալ) չափով միացած, համեմատաբար, առավելագույն համերաշխությամբ: Տեսնում ենք, վոր կուսակցությունն ամենեին ել չի քայլայի և ընդունակ և այժմ, ինչպես ցույց տվեց վերջին ընտրությունների փորձը, իր հետեւց տանել բանվորական մասսաներին: Այսպես վոր հաշվեգումար տալու տեսակետից, յես կրկնում եմ այստեղ, մենք տեսնում ենք միանգամայն ճիշտ զուգահեռ. — ինչպես մեր յերկիրը, չնայած ու նախանշաններին, դուրս յեկալ միանգամայն կայուն, ճիշտ այդպես ել բարեհաջող կերպով առաջ գնաց, գոնե առայժմ, գերմանական կուսակցության գործը, և մեզ հաջողվեց վոչ կորստի մատնել գերմանական կոմ. կուսակցության կենտր. կոմիտեն, վոչ ել, ևս առավել վոչնչացնել կոմմունիստական շարժումը:

Սկզբունքորեն բոլոր տրամադայնությունները հյուսված եյին միմյանց յերեք հարցերի շուրջը: Դրանք են. — սաքսոնական փորձի, միաձույլ ճակատի գործելակերպի հարցերը և մեր խմբի ներ-

կուսակցական դիրքի հարցը՝ հանդեպ գերմանական կոմմունիստական կուսակցության:

### Սաքսոնական փորձը

Այդ բոլոր հարցերն ու պըոմբլեմները հյուսված են իրար և մի կապ են կազմում:

Սաքսոնիայի վերաբերյալ հարցը, տարածայնությունների տեսակետից, այն և, վոր մեր ներկայացուցչության մեծամասնությունը, մեր քաղաքական Բյուրոյի մեծամասնության և կենտր. կոմիտեյի հետ միասին, սաքսոնական փորձի անհաջողությունը վերաբրում եր գլխավորապես այն հանգամանքին, վոր գերմ. կոմմունիստական կուսակցության ներսում գոյություն ունեն սոցիալդեմոկրատական ամառական կուսակցության մեր այն ժամանակված ղեկավարող խմբի կողմից կատարվել են պատեհապաշտական (ոպտրոյւնիստական) սիալներ: Խնդիրն այն չե բոլորովին, թե իբր մենք այն ժամանակ այն տեսակետին եյինք, թե հաղթանակը պարտադիր և իբր դրա համար ել մեղադրում եյինք ընկերներին, վոր սրանք բավարար չափով հաղթական և վճռական կոիվ չկազմակերպեցին Սաքսոնիալում: Վաչ, մեր մեղադրանքն ուղղված եր այն ժամանակվա գերմանական կենտր. կոմիտեյի ղեկավար խմբի դեմ, վորի գլուխն եր ընկ. Բլանդերը. և մենք մեղադրում եյին նրանց նրա համար, վոր սրանք սաքսոնական կառավարության մեջ մտնելու հետ կապված ամբողջ նախապատրաստական աշխատական սիալ ուղեգծերի (ըելս) վրա եյին դրել: Նրանք փոխանակ իրենց տրամադրության տակ ունեցած ամբողջ ժամանակը ոգտագործելու բանվոր դասակարգի մասսայական կազմակերպություն ստեղծելու համար, փոխանակ առավելագույն ջանք գործ դառնելու մասսաները զինելու և այն ժամանակ աճող շարժման հսկելու գովազ (ոռուպոր) լինելու, փոխանակ իրենց ամբյոնի բարձունչող փողը (ոռուպոր) լինելու, փոխանակ իրենց ամբյոնի բարձունչող բից հրավիրելու և զարգացնելու այդ մասսայական շարժումը, — ամենաաչքի ընկնող աշխատավորներն, ինչպես ընկնոր Բրանդերը, սկսեցին սաքսոնական կառավարության վերաբերյալ այդ ամբողջ փորձին նայել պարլամենտական կոմիտեացիայի տեսակետից, արսինքն թե՛ բարժուական գեմոկրատիայի, բուրժուական պետապարատի միջոցներն ու մեթոդներն ոգտագործելու շնորհիվ, կարելի յե զարգացման համեմատաբար ավելի յերկար փուլով:

շատ կամ քիչ չափով առանց հիվանդագին ցնցումների անցնել բարձրագույն ստաղիսն. Սաքսոնական կառավարության վերաբերյալ խնդրի այդ ձևով գնելը տարածայնություններ առաջ բերեց վոչ միայն աշխատեղ, այլ նաև մեր պատգամավորության մեծամասնության և ոպպողիցիայի ընկերների միջև.

### Միաձույլ ճակատի գործելակերպը

Մյուս հարցը, վո՞ր սաքսոնական կառավարության մեջ մըտնելու հարցի հիմքն և կազմում, դա միաձույլ ճակատի գործելակերպին վերաբերյալ հարցն է. Մեզ մոտ, ինձ թվում ե, այդ հացը դրված եր միանգամայն պարզ և վորոշ, և հետո իր ճիշտ ձևակերպումը գտավ բաղ բյուրոյի այդ առթիվ ընդունած րանաձնի մեջ: Միաձույլ ճակատի գործելակերպին մենք նայում ենքնք վորպես մի հայտնի ուղղմագիտական շարժումն (մանյովը) աղիտացիայի, մասսաների մորիլիզացիայի և բանվոր գասակարգը սոցիալ-դեմոկրատիայի ազգեցությունից դուրս կորզելու նպատակով, իսկ գերմանական կոմմոնիստական կուսակցության աջ թևի ընկերները, վորոնք արձագանք գտան մեր ոպպողիցիայի կողմից, մի ամբողջ տեսական կոնսորտիուկցիա ունեյին իրենց առջև Միաձույլ ճակատի գործելակերպը նրանց թվում եր գործնական բլոկի հարց սոց. դեմ. հետ, վորոշ ետապ բանվոր դասակարգի կովում, վորը ներկայանում եր նրանց վոչ միայն մասսաների աղիտացիայի և մորիլիզացիայի մեթոդ, վոչ միայն մասսաներին սոց. դեմ. ազգեցությունից դուրս կորզելու մեթոդ, այլ վորոշ բաղաքական համագործակցություն, վորոշ բլոկ. Այս միատումը պատմական զարգացման տեսակետից առաջ ել նկատելի յեր դեռ Լայպցիգի կրասակցական կոնցրեսում: Ըսկեր Բրանդլերն այն ժամանակ մի սկզբունք եր պաշտպանում, վորը հետո, ինձ թվում ե, դարձավ գործողություն: Այն ժամանակ մի ամբողջ տեսություն եր առաջադրած—թե մեր խնդիրն և նման կազմակերպության ոգնությամբ ոգտագործել, բուրժուական դեմոկրատիայի միջոցները: Հետևաբար որիենտացիան վոչ թե մասսաներին սոց. դեմ. ազգեցությունից դուրս կորզելու և նրան բուրժուագիայի դեմ հարձակման առաջնորդելու, կամ նրա պետ ապարատը խորտակելու կողմն եր, այլ այն կողմն, ինչ վոր նարավոր և նպատակահարմար եր ներկայանում, առելի քիչ հիվանդագին, այսինքն սոց. դեմ. հետ վորոշ

